Ամենայն սբ հրեշտակք և հրեշտակապետք, աղօ․
Սբ Աբէլ, աղօթեա՛ վս իմ։
Ամենայն դասք արդարոց, աղօթեցէք։
Սբ Աբրահամ, աղօթ․
Սբ Յովհաննէս մկրտիչ, ա․
Ամենայն սբ Նահապետք, և մարգարէք, աղօթ․
Սբ Պետրոս, աղօթեա՛։
Սբ Պօղոս, աղօ․
Սբ Անդրէաս, աղօ․
Սբ Յոհաննէս աւետա-րանիչ, աղօթեա՛։
Ամենայն սբ առաքեալք և
աւե-

աւետարանիչք, աղօթեց·
Ամենայն ս̅ք աշակերտք Տ̅ն,
աղօթեցէք։
Ամենայն ս̅ք անմեղք, աղօ·
Ս̅բ Ստեփաննոս, աղօ·
Ս̅բ Լաւրենտիոս, աղօ·
Ամենայն ս̅ք Մարտիրոսք,
աղօթեցէք։
Ս̅բ Սեղբեստրոս, աղօ·
Ս̅բ Գրիգորիոս, աղօ·
Ս̅բ Օգոստինոս, աղօ·
Ամենայն ս̅ք Հայրապետք
և Խոստովանողք, աղօ·
Ս̅բ Բենեդիկտոս, աղօ·
Ս̅բ Փրանչիսկոս, աղօ·
Ամենայն ս̅ք Միակեացք և
Անապատականք, աղօ·
Սրբուհի Մարիամ Մագդա-
ղենացի, աղօ·
Սրբուհի Լուկիա, աղօ·

Ամենայն սրբուհի կուսանք
և այրիք, աղօ.
Ամենայն սրբք և սրբուհիք
Ա՟յ, բարեխօսեցէք վ՟ն իմ:
Քաւիչ լե՛ր, և խնայեա՛ ինձ
Տէր:
Քաւիչ լե՛ր, և անսա՛ ինձ
Տէր:
Քաւիչ լե՛ր, և ազատեա՛
զիս Տէր:
Ի բարկութենէ քումմէ, ազա_
տեա՛ զիս Տէր:
Ի վտանգէ մահու, ազա.
Ի չար մահուանէ, ազա.
Ի պատժոց դժոխոց, ազա.
Յամենայն չարեաց, ազա.
Ի յիշխանութենէ սատանայի,
ազատեա՛:
Ս՟ւ ծննդեամբ քո սրբա_
զանի, ազատեա.

Ս՟ւ

Վ՟ն խաչի և չարչարանաց
քոց, ազատ·
Վ՟ն մահուան և թաղման
քոյ, ազատ·
Վ՟ն փառաւոր յարութեն քոյ,
ազատեա՛մ:
Վ՟ն գալստեանն հանդերձ-
մանն քոյ, ազատ·
Վ՟ն շնորհաց Ոգւոյդ սրբոյ
մխիթարչի, ազատ·
Ի յաւուր դատողութեան,
ազատեա՛մ:
Մեղաւորս զքեզ աղաչեմ,
լուր ինձ:
Օ ի ինձ խնայեցես, զքեզ
աղաչեմ:
Տ՟ր ողորմեա՛ց:
Ք՟ս ողորմեա՛ց:

Աղօթք վ͞ս համբերելոյ ՚ի հի-
ւանդութեան ։

Խօսեցայց առ Տ͞ր , զի ես
հող և մոխիր եմ , ստո́ւեր
փախստական , և գոլորշի
առժամանակեայ , յիշեա́ Տ͞ր ,
զինչ է՛ կար զօրութ͞ե իմոյ
յիշեա́ զի ո͞պ կաւ ստեղծեր
զիս , և միւսանգամ ՚յերկիր
դարձուցանես ։ Բայց մի՛
սրտմտութ͞ե քով մարտնչիր
ընդ-իս , զի զի՞նչ է՛ զօրու-
թի͞ն իմ , թէ համբերել կա-
րիցեմ , կամ զի՞նչ ժամա-
նակ , զի համբերատարեցի անձն
իմ , մի՛ թէ զօրութիւն վի-
մաց իցէ զօրութի͞ն իմ , կամ
մարմինք իմ իցեն պղնձիք ,
զի նեղեաք Տ͞ն ՚ի մարմնի ի-
մում

մում եմ , որոց սպասաւորու-
թիւն ծըծէ զարիւն իմ , և
առ Տն զարհուրեցուցանէ
զիս ։ Որով զինչ , մի՛ թէ
յերկինս բացից զբերան իմ ,
կամ ընդ դէմ դարձայց բա-
նիցն սոցին , այլ մանա-
ւանդ ասացից , թէ Տր ետ
զզօրութի և զառողջութիւն
և Տր էառ , որպ Տն հաճոյ
թուեցաւ , այնպէս եղև ,
եղիցի անուն Տն օրհնե-
ցեալ ։ Այսպէս ասեմ Տր ,
և այսպէս իմանամ , արդար
ես Տր , և ուղիղ է՛ դատաստա-
տան քո , արդարև ես մե-
ծագունից վշտաց արժանի
եմ ըստ իմում դատողու-
թեան ։ Որով ճանաչեմ
զձեռն հօր , որ գթութե

խրատէ զիս , և ո՛չ իբրև
զաջ դատաստանին պատժէ
զիս , բայց խնդրեմ ՚ի քէն
հայր բարերարութ զի յիշե-
ցես զողորմութիւնս քո , որ
սու՛ ո՛չ ինչ ունիմ զզօրու-
թիւն , եթէ ո՛չ ՚ի քէն կազ-
դուրեցիմ ։ Տէ՛ր ուրեմն ինձ
զշնորհս համբերութեան ,
զի տանիլ կարացից զաւաց
իմոց , և անհաւանելի պատ-
րաստէ՛ սիրտ իմ ընդունել
զինչ և պատահիցեն ինձ ։
Ո՛վ Տր̄ իմ , զի համբե-
րութբ̄ ստանայցեմ զհոգին
իմ , վասն որոյ և ստէպ
նայիմ յերեսս Քնի քո , զի
յիշելով զծանրագոյն չար-
չարանս նորին զորս վասն
մեր կրեաց ՚ի մարմնի իւ-
րում ,

րում, և ես նորին մատուցու-
թեամբ սպասաւորենիլ ջա-
նայցեմ ։ Նա եղև քեզ
հնազանդ մահու չափ, և
մահու խաչի, եւ ես և ո՛չ
արեան չափ դժեմ ունիլ կա-
րացի, սակայն խնդրեմ,
թէ զոր չափ բռնադատու-
թե կրիցեմ, մինչ խայթոցք
հնազանդութե, և ցաւք մա-
հու անկանիցին ՚ի վերայ իմ ։
Մարդ զզօրութի իմ անքեղ
պահեսցես, զի դու ես ա-
պաւէն իմ, դու ես պաշ-
տպան կենաց իմոց, փոր-
ձեա զիս Տր̄ և քննեա զիս,
փորձեա զերիկամունս իմ,
և զսիրտ իմ ։ Գիտեմ զի ո՛չ
են արժանի չարչարանք ժա-
մանակիս հանդերձելոց փա-

ռացն որք յայտնելոց են 'ի
մեզ, սակայն զի որպէս
պարտ էր Ք՟ի չարչարել,
և այսպէս մտանել 'ի փառս
իւր, նմանապէս և ես քրիս-
տոնեայ գոլով եթէ ոչ կեր-
պարանակից լիցիմ գլխոյ 'ի-
մում, և ոչ անցանիցեմ ընդ
հուր և ընդ ջուր, ոչ եղա-
նիցեմ 'ի հանգիստ։ Պահեա՛
ուրեմն զիս այժմ 'ի տառապ-
անս, որպէս պահեցեր
զերիս մանկունսն 'ի հնոցին
բաբելոնի, զի օրհնեցից
զանուն քո յաւիտեանս յա-
ւիտենից։ Ամէն։

Իղձ ՚ի խորոց սրտէ ՚ի մէջ հիւանդութեան ։

Իմաստութիւն յաւիտենականն որ հասանես ՚ի ծայրաց մինչև ՚ի ծայրս աշխարհի հզօրեղապէս, և կարգաւորես զամենայն քոյով քաղցրութեամբ, հարեր զիս այսու հիւանդութեամբ և տկարութեամբ մարմնոյս բայց կարգաւորեա՛ զսա քաղցրութեամբ ՚ի փառս քո և ՚ի փրկութիւն իմ, որ զամենայն կշռով, թուով, և չափով տրամադրես։ Ո՛վ հայր ամենակալող, յորմէ ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք իջանեն, և ամենայն տրամադրութիւնք

անձանց մերոց 'ի քէն առա֊
տաբաշխին , որպէս և այս
հի՛ւանդութիւն զոր այժմ
կրեմ, նայեաց 'ի վշտագնե֊
ցեալ ծառայ քո , և տրա֊
մադրեա՛ զիս ըստ քում հա֊
ճութեան , քանզի դու ես
որ կառավարես զամենայն ,
և դու պահես զամենայն
ոսկերս մեր , և մի՛ 'ի նոցա֊
նէ առանց քո ո՛չ փշրեսցի ։
Հերք գլխոց մերոց թո՛ւե֊
ցեալք են առաջի քո , և
'ի ձեռին քոյ է՛ ժառանգու֊
թի՛ մեր , դու հարկանես
և դու բժշկես , կեցուցա֊
նես և մեռուցանես , թէ
կեամք և թէ մեռանիմք քոյք
եմք Տէր , եղիցին կամք քո
օրհնեցեալ ։ Եթէ զբարիս

ընկալայք ՚ի ձեռանէ քումմէ չարեաց եւ համբերել պատուհասք , որք սակայն ո՛չ եղիցին չարիք , եթէ ըն-դունիցիմք ըստ հաճոյից քոց , որ զմեզ խրատես ի-բրեւ զորդիս ա՛ռ ՚ի կրթու-թիւն , զի չարիք այսոքիկ գործակիցք լիցին մեզ ՚ի բարին ։

Տէր ես ծառայ քո եմ , եւ որդի աղախնոյ քոյ , արա՛ ընդ իս որպէս եւ հաճոյ ե-ղիցի առաջի քոյ , եւ ո՞վ իցեմ ես , որ ընդ դէմ դառնայցեմ քեզ , քանզի ո՞վ ընդ դիմացաւ քեզ , եւ ընկալաւ զխաղաղութիւն ։ Ահա՛ւասիկ ես կաւ , եւ դու բրուտ , կազմեա՛ եւ թրծեա՛ զիս

զիս 'ի հնոցի այսմիկ նեղու-
թեան , զի ընտրեցիմ քեզ ա-
նօթ պատուական ։ Ո՛վ
բժիշկ , որ բանիւ բժշկես
զամենայն հիւանդութիւնս
հոգւոյ և մարմնոյ , բժշկեա՛
զիս Տէր և բժշկեցայց հո-
գւով , կեցո՛ զիս Տէր , և
կեցից ես մարմնով , 'ի քեզ
վստահանամ , և ո՛չ 'ի բժի-
շկս և 'ի դեղս , քանզի ե-
թէ դու ո՛չ կանգնիցես ըզ-
տուն մարմնոյ իմոյ , ինանիր
վաստակեն շինողք նորա ։
Դու ուրեմն դեղոց այսո-
ցիկ տո՛ւր զզօրութիւն , զի
զկատարումն խնդրանաց ու-
նիցին 'ի յիս , ապա թէ ո՛չ ,
զհամբերութիւն գործեա՛ յան-
ձին իմում , քանզի նա է՛
դեղ

դեղ սպոյգ և զօրաւո՜ր ընդ-
դէմ ամենայն հիւանդու-
թեանց մարմնոյ իմոյ, զոր
մինչև ցայս վայր սնուցի
փափկութ՟բ, և տածեցի
հեշտասիրութ՟բ, և խոթա-
ցուցի զմարմին իմ, դու-
ուրեմն ըստ հաճոյից քոց
խորտակեա՛ զմարմին իմ,
զի կեցցէ թշուա՜ռացեալ
հոգի իմ՝ յաւիտեանս ։

Ամէն ։

Յանձնարարութիւն հոգւոյ 'ի ձեռս արարչագործին :

Արդ-էն իսկ առողջ և կարող գոլով յանձնառնեմ զիս քեզ Տ͞ր , զի մի՛ գուցէ 'ի նուաղիլն իմ ոչ կարիցեմ զգաստապէս յանձն առնել քեզ զնոյն : Երկնչիմ 'ի ժամէն յայնմանէ , յորում 'ի մէջ կենդանեաց գոլով , ոչ ճանաչիցեմ զդողն իմ , ըստ որում տեսի զբազումս , որք ունելով զառատութի շնչոյ և զկեանս , ոչ գիտէին զինքեանս գոլ կենդանիս : Ով յայնմ ժամու յորում հոգին շարժի , և սարսափի 'ի փոխմանէ , և յելանելոյ 'ի բանտէ մարմնոյ

ծոյ իւրոյ ընկալցի զնա, եթէ դու ստեղծօղդ 'ի բաց մերժիցես ։ Ո՜վ համբերող Յս̄ յիշեա՛, զի և դու 'ի յետին անձկութեան արտասո՛ւեցեր, և զքեզ թողեցեալ և լքեցեալ գոլ ամբաստանեցեր, և զհոգիդ քո ամենամաքուր 'ի ձեռս հօր յանձն արարեր, աղաղակեցեր, և անշնչացար ։ Ահա ես ևս առ քեզ աղաղակեմ, զի դու փրկիչ իմ ընկալցիս զհոգի իմ, մինչ տագնապեալ և նեղէ հիւանդութեամբ 'ի մարմնոյ աստի ելանիցէ ։ Յիշեա՛ ո՜վ բարի Յիսուս, զի 'ի խաչին զբազուկս քոյ տարածեցեր, զկողս քոյ բացեր,

և զգլուխ խոնարհեցու-
ցեր, զի ահա հոգի իմ լքե-
ցեալ յամենից ստեղծուա-
ծոց, զապաւինութի խն-
դրէ, 'ի բազուկս քոյս դի-
մէ, և 'ի գոգ քո անկանի,
ներեա՛ ուրեմն աղաչեմ ո-
ղորմելոյ այսմիկ առ քեզ
մերձենալ, և մի՛ անտի 'ի
բաց մերժիցես, մինչև ան-
ցանիցէ բարկութիւն քո,
քան զի անդ աներկեւանա-
պէս կայցէ, և անդ 'ի սպա-
սաւորացն դժոխոց թաքչիլ
կարիցէ: Արդ 'ի ձեռս քո
Տէր յանձն առնեմ զհոգի
իմ, զոր դու ստեղծեր և
նորոգեցեր, մի՛ անտես առ-
ներ զստեղծուած քո, ահա
թողում զաշխարհ և փութամ
առ քեզ

առ քեզ գալ, հեռանալ յեր֊
կրաւորացս, զի առ քեզ մեր֊
ձեցայցեմ, ելանեմ ՚ի բնա֊
կութ̃է մարմնոյս, և դնիցեմ
՚ի բնակարանս հրեշտակաց,
ընկա՛լ զիս ՚ի յարկս քոյս յա֊
ւիտենից, և մի՛ մերժեր զիս
՚յերեսաց քոց, զի դու ես
յոյս իմ ՚ի մանկութ̃է իմմէ ։
Հայեաց Տ̃ր ՚ի ծառայ քո,
զի դու ես Ա̃ծ փրկիչ իմ,
նուաղեցաւ սիրտ իմ և մար֊
մին իմ, բաժին իմ Ա̃ծ յա֊
ւիտեան, առաջի քոյ է՛ ա̃մ
ցանկութի̃ իմ, և առ քեզ
տենչայ հոգի իմ, օգնեա՛ ինձ
Ա̃ծ փրկիչ իմ, և փրկեա՛ զիս
վ̃ն փառաց անուան քոյ
Ամէն ։

Յորժամ՝ հիւանդն կայ 'ի վտանգի առեալ զխաչելութիւն Քի 'ի ձեռն ասասցէ զաղօթս ։

Երկրպագեմ քեզ Յս Քս, և օրհնաբանեմ զքեզ, զի 'ի ձեռն խաչի քոյ փրկեցեր զաշխարհ, և 'ի ձեռն արեան քոյ հեղեցելոյ յերկիր վերանորոգեցեր զմեզ ։ Ձգեա՛ զիս առ քեզ ով Բարի Յս, որ ասացեր, Թէ յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս պահեա՛ զիս հզօր ձեռամբ քով, զի մի՛ ոք յափշտակելով զիս մեկնեցէ 'ի քէն ։ Ո՜վ հոգի Քի սրբեա՛ զիս, արիւն Քի մաքրեա՛ զիս, մարմին Քի կեցո՛ զիս, Ջուր

կողին

կողմն Քի առեալ զնա, չար-
չարանք Քի զօրացան զնա :
Բարի Յս լուր ինձ, 'ի
մէջ վիրաց քոց ծածկեա՛
զիս, և մի՛ թողուր զիս որո-
շիլ 'ի քէն, 'ի ժամու մա-
հուան իմոյ կոչեա՛ զիս, և
հրամայեա՛ առ քեզ գալ,
զի ընդ սբս քոյս օրհնեցից
զքեզ 'յաւիտեան : Մի՛
ընկենուր զիս 'յերեսաց քոց,
և զհոգի քո սբ մի՛ հաներ
յինէն, մի՛ կորուսանիցէ զիս
անօրէնութիւն իմ, զոր ես-
անեղծ ամենազօր բարերա-
րութիւն քո : Նայեա՛ց յիս
աչօք ողորմութեան քոյ : և
լուր ինձ որ յուսացեալս եմ
'ի քեզ, և գթա՛ յիս, որ լի
եմ թշուառութեամբ : Ողջ

չե՛ր աղէւոր բարութե, ողջ
չե՛ր փրկո՛ւթեան պատարագ-
մատուցեալ ՚ի վ̅ր̅յ խաչափայ-
տին, ողջ չե՛ր պատո՛ւական
և մեծագին արեան հեղե-
ցեալ ՚ի վիրաց Տ̅ն̅ իմոյ Յ̅ս̅ի
Ք̅ս̅ի ՚ի լո՛ւացումն մեղաց
աշխարհի ։ Յիշեա՛ Տէր
զստեղծո՛ւած քո, զոր ա-
րեամբ քով վերագնեցեր,
բաւ լիցի ինձ պարծիլ,
բայց միայն ՚ի խաչ Տ̅ն̅ մե-
րոյ Յ̅ս̅ի Ք̅ս̅ի, որով ինձ աշ-
խարհ ՚ի խաչ ելեալ է՛, և
ես աշխարհի ։ Ահա տե-
սանեմ զքեզ բաղցրագու-
նեղ փրկիչ կախեցեալ ՚ի
խաչին բաղկատարած, ու-
նելով զգլուխ քո խոնարհե-
ցեալ, պատրաստ ա՛ռ ՚ի
ողջա-

ողջագուրել զմեզ, և սփռա_
լի ձայնիւ հրաւիրես զամե_
նեսեան ասելով, եկայք
առ իս ամենայն աշխատե_
ցեալք և բեռնաւորք, և ես
հանգուցից զձեզ ։ Ահաւա_
սիկ գամ առ քեզ Տր̄, արա՛
ընդ իս ըստ բանի քում, և
հանգո՛ զիս, քանզի գամ
վաստակեցեալ և ծանրա_
բեռնեցեալ մեղօք իմովք,
արա՛ զքաղցրութիւն ընդ ծա_
ռայի քում, որ զցաւս և
զաշխատութիւն մեր բարձեր
'ի վր̄ խաչին ։ Ամէն ։

Վասն մեռելոց ։

Եկայք երկիրպագցուք այն-
մին Թագաւորին , որում
կեան ամենեքեան ։ Ո՜ հան-
գիստ ա՛ւ խոստմնական պատ-
գեւեա՛ նմա Տր ։ Եւ լոյս
անշիջանաւոր ծագեսցի նմա ։
Ի խորոց կարդացի առ քեզ
Տր , Տր լուր ձայնի իմում ։
Եղիցին ականջք քո լսօղք
ձայնի աղաչանաց իմոց ։
Թէ զանօրէնութիւն զննիցես
Տր , Տր ո՛վ համբերիցէ ։
Քանզի առ քեզ է՛ այցե-
լութի , և վասն օրինաց քոց
համբերի քեզ Տր ։
Համբերեաց անձն իմ բա-
նի քում , յուսացաւ հոգի իմ
ի Տր ։

Պահէ

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, յուսասցէ Իսրայէլ ՚ի Տր։

Մս զի առ Տր է ողորմութիւն, եւ առատատաձիր առ նմա փրկութիւն։

Եւ նա փրկեսցէ զԻսրայէլ յամենից նորին անօրէնութեց։

Օ Հանդիստ աւիտենական պարգեւեա՛ նց Տր։

Եւ լոյս մշտնջենաւոր ծագեսցի նց։ Օ գործս ձեռաց քոց Տէր մի՛ անտես առներ։

Լուայ զձայն ՚ի յերկնից, որ ասէր ինձ։ Երանի մեռելոց որք ՚ի Տր ննջեցին։

Օ ամենայն զոր տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ, եւ

որ գայ առ իս ո՛չ մերժեցից
զնա արտաքս։

Ես եմ յարութիւն և կեանք,
որ հաւատայ յիս՝ թէև մե֊
ռանի՝ կեցցէ, և ամենայն
որ կենդանի է՛ և հաւատայ
յիս, ո՛չ մեռանիցի ՚ի յաւի֊
տեան։

Ո հանգիստ անխռովական
պարգևեա՛ նմա Տէր։ Եւ լոյս
մշտնջենաւոր ծագեսցի նորա։
Դրանց դժոխոց ազատեա՛
Տէր զհոգին նորա։ Եւ հանգի֊
ցէ ՚ի խաղաղութեան։

Տէր լո՛ւր աղօթից իմոց, և ա֊
ղաղակ իմ առ քեզ գայցէ։

Աղօթեսցուք։

Հաւատացելոց Այ, ամե֊
նեցունց հաստից և մրկից,
հոգեաց ծառայից քոց և

աղախնեայց, զթողութիւն համայնից շնորհեա մեղաց, զի ներողութիւն քո՝ որում միշտ փափաքին բարեպաշտիւք աստուածայցեն մաղթանօք:

Վասն մեռելոց Եպիսկոպոսաց, կամ Քահանայից:

Ած, որ 'ի մէջ առաքելականաց քահանայից զծառայս քոյս պետականաւ կամ թէ քահանայականաւ պատուեր արժանապատուութեամբ ճոխանալ: Շնորհեա աղաչեմք, զի նոցին և յարակայն դասակցեցին ընծակակցութէ: Տէ մերով Յիւ Քիւ: Ամն:

Վասն հօրն և մօրն ։

Ո՛վ որ զհայր և զմայր պա-
տուել մեզ հրամայեցեր, ողորմեաց բարեգթաբար հոգւոց հօր և մօր իմոյ, և թող զմեղս նոցա, զիս և ս տեսանել զնս̃ ՚ի յուրախութե յաւիտենականին պայծառութե արժանի արա, Տր̃ մե-րով Յ̃իւ Ք̃իւ ։ Ամէն ։

Վասն մեռելոց եղբարց մերձաւորաց և բարերարաց ։

Ո՛վ առատաբաշխիչ ներո-ղութե, և մարդկային կե-ցութեան սիրող, աղաչեմք զքոյդ բարեգթութի, զի մե-րոյ ժողովրդեան զեղբարս, զմեր-ձաւորս, և զբարերարս, որք ՚ի կեն-

'ի կենցաղոյս 'յայսմանէ ան-
դրաւորելոցն, բարեխօսու-
թբ երանուհւոյն Մարիա-
մու միշտ կուսին, ընդ սր-
բոց քոց ամենից առ միշտն-
ջենաւորի երանութե վի-
ճակակցութիւնն ժամանել
արժանաւորիցես, Տէրամբ
մերով Յիս. Քրի. : Ամէն :

'Ի յաւուր Թաղման մեռելոյն :

Ո՛րպէս աղաչեմք Տր զհո-
գի ծառայի քո, կամ աղախ-
նոյ քո, զի վախճանեալ 'ի
կենցաղոյս կենդանացիցես,
և զոր ըստ մարմնոյ բնակա-
նելութե, կենցաղավարու-
թբ իսկ մարդկային համա-
գործեաց, դու ներմամբ
ողորմածութեանդ քոյդ բա-
րե-

լեգթութե՝ ընծեմ և մա-
քրեմ, Տ̅ր մերով Յ̅իւ
Ք̅իւ: Ամէն:

Յաւուր տարեդարձականի:

Ամ̅ ներողութեց Տ̅ր, տուր
հոգւոց ծառայից և աղախ-
նեայց քոց, որոց զտարե-
դարձականն համայիշատա-
կեմք զօր թաղման, զտեղի
յարաղովլացութե, զհանգիստ
երանութե, և զլոյս պայ-
ծառութե, Տ̅րբ մերով Յ̅իւ
Ք̅իւ: Ամէն:

Լիթանիայք վ̅ն մեռելոց:

Տ̅ր ողորմեա՛ց:
Ք̅ս ողորմեա՛ց:
Տ̅ր ողորմեա՛ց:
Ք̅ս լո՛ւր մեզ:

Ք̅ս

*Քս̄ յար լուր մեզ։
Հայր երկնաւոր Ա՛ծ, ողոր-
մեա՛ց ամենից հաւատա-
ցելոց մեռելոց։
Որդի Փրկագնող աշխարհի
Ա՛ծ, ողորմեա՛ց ամենից
հաւատացելոց,
Ոգի սբ̄ Ա՛ծ, ողոր.
Սբ̄ Երրորդութի Մ՛ի Ա՛ծ,
ողորմեա՛ց։
Սրբուհի Մարիամ, աղօ-
թեա՛ վասն հաւատացե-
լոց մեռելոց։
Սբ̄հի Ա՛ծածին, աղօ.
Սբ̄հի կոյս կուսանաց, աղօ.
Սբ̄ Միքայէլ, աղօ.
Ա՛մենայնք սբ̄ք Հրեշտակք եւ
Հրեշտակապետք, աղօ-
թեցէք վասն հաւատա-
ցելոց մեռելոց։

Սբ̄

Սր̅ Յօհաննէս մկրտիչ, ա·
Սր̅ Պետրոս, աղօ·
Սր̅ Պօղոս, աղօ·
Սր̅ Յօհաննէս, աղօ·
Ամենայն սր̅ք Առաքեալք և
Աւետարանիչք, աղօ·
Սր̅ Ստեփաննոս, աղ·
Սր̅ Լօրէնցիոս, աղ·
Ամ̅ե սր̅ք Մարտիրոսք, աղ·
Սր̅ Գրիգորիոս, աղ·
Սր̅ Ամբրոզիոս, աղ·
Ամենայն սր̅ք Հայրապետք,
և խոստովանողք, աղօ·
Սրբուհի Մարիամ մագդա-
ղենացի, աղօթեա՛ վասն
հաւատացելոց մեռելոց:
Սրբուհի Կատարինէ, աղօ·
Ամ̅ե սրբուհիք կուսանք, և
այրիք, աղօթեցէք վս̅·
Ամենայն սր̅ք և սրբուհիք

Ա՟յ բարեխօսեցէք վասն հանգուցելոց մեռելոց.

Ա,յցերու լե՛ր Տր, խնայեա՛ նոցա Տր:

Բ,ա՛ւարար լե՛ր նոցա, և յար լո՛ւր մեզ Տր:

Ի համայնէ չարէ զերծո՛ զնոսա Տէր:

Ի բարկութենէ քումէ զեր.

Ի յիշխանութ՟է դիւէն զեր.

Ի բոցոյ հրոյն զերծ.

Ի բանտէ ստուերաց մահու զերծ.

Վ՟ն ամբծի քոյոյ յղացման, զերծ.

Վ՟ն քոյոյ ծննդեան զեր.

Վ՟ն քաղցրատառապանելի քոյոյ անուան զերծո՛ զն՟ո Տէր.

Վ՟ն բազմութ՟ե քոյոյ ողոր-մութ՟ե, զերծ.

Վ՟ն

Վ̄ս սաստակագունելից չար-
չարանաց քոց, զերծ.
Վ̄ս մեծագնելի քոյոյ ա-
րեան, զերծ.
Վ̄ս սրբադունելից քոյոց
խոցո՛ւածոց, զերծ.
Վ̄ս պատուականին քոյոյ մա-
հո՛ւան զերծի՛ զնոսա Տ̄ր։
Մ՚եղաւո՛րքս զքեզ աղաչեմք
լո՛ւր մեզ։
Որ զՄ՚արիամ արձակեցեր,
և ա՛ւազակին լո՛ւար, զք.
Որ զկեցուցանելիս կեցու-
ցանես ձրի, զքեզ.
Զի զծնօղս, զմերձաւո՛րս,
և զբարերարս մերս ՚ի
պատժից դժոխոց ապրե-
ցուցանել արժանաւո՛րե-
ցես, զքեզ.
Զի զամենայնս հաւատա-
ցեալս

ցեալս ննջեցեալս ՝ի յաւի_
տենականն դատապար_
տութենէ ազատել արժա_
նաւորեցես, զքեզ.

Օ ի ամենեցուն հաւա_
տացելոց ննջեցելոց, որոց
՝ի յերկրի յիշատակ յատ_
կապէս լինի, ողորմել ար_
ժանաւորեցես, զքեզ.

Օ ի նց ամենեցուն խնայել
և ներել արժանաւորեցես
զքեզ.

Օ ի զկարգութիւն նոցա
լցուցանել արժանաւորե_
ցես, զքեզ.

Օ ի Ջոկք հրեշտակաց պայ_
ծառապէս օգնիցեն, զքեզ.

Օ ի դասք նահապետաց և
մարգարէից նպաստք նց
լինիցին, զքեզ.

Օ ի տառապելոց Երանց մխա-
ւանորք տառապանաւունեցին
զնոսա, դեղ.
Օ ի զօրք մարտիկոսին պայ-
ծառապղղեցից պարտանհի-
ցին ընդոքօք, դեղ.
Օ ի խոստովանողաց սրբոց
պարք նոցա առաջնորդի-
ցին, դեղ.
Օ ի հրաժարեցելոց կուսա-
նաց խումբք նորա յար հե-
տեւեցին, դեղ.
Օ ի ամ. սահեղծիչն հեր-
եանց՝ որ զնոսա ՚ի կամաւոյ եր-
կրի կերպարացոյց անդրա-
դառնալ քամիցեն, դեղ.
Օ ի դէմ հեզին և քաղցերն
Յի նոցա բարեդթամեա
երևեցի, դեղ.
Օ ի ամ. աջակողմն քո ՚ի վե-
ճակս

Զանս ընտրեցելոց զնոսա
վերընդունիցիս, զքեզ աղ·
Որդի Ա̅յ աղբիւր գթութե̅.
Որ զքահանայս ուխտիս մաքրու
եւ ժողովոց, զքեզ աղաչ·
Գառն Ա̅յ, որ բառնաս
զմեղս աշխարհի, շնորհեա՛
նոցա զհանգիստ:
Գառն Ա̅յ, որ բառնաս
զմեղս աշխարհի, շնորհեա՛
նոցա զհանգիստ:
Գառն Ա̅յ, որ բառնաս
զմեղս աշխարհի, շնորհեա՛
նց̅ զմշտնջենաւորն հան-
գիստ:
Ք̅ս անսա՛ մեզ:
Ք̅ս յար լո՛ւր մեզ:
Տ̅ր ողորմեա՛ց:
Ք̅ս ողորմեա՛ց:

Աղօթեսցուք։

Քեզ Տր յանձնառնեմ զհոգի ծառայի քո, կամ աղախնոյ քո զի վախճանեալ ՚ի կենցաղոյս կենդանասցի ՚ի քեզ, և զմեղս զորս անկարութբ մարդկային կենցաղավարութն է՛ գործեալ, դու ներմամբ քոյ ողորմածագունեղն գթութն ջնջիցես։ Տր մերով Յիւ Քիւ.

Ամէն։ Հայր մեր որ։

Երգ վն մեռելոց։

Յաւուր յայնմիկ յաւուր
 ցասման,
բնաւք կենցաղք յաճիւն
 դառնան,
ըստ գուշակին և ըստ Դաւ-
 թեան։

Որ-

Որքան երկիւղէ՛ լինելոյ։
մինչ դատաւո՛րն է՛ առգա֊
լոյ,
զհամայնս յանկարծ տալա֊
ցրելոյ։
Փողն ահաբեկ յորժամ հնչի,
՚ի գերեզմանս հանուրոյ երկրի,
բնութի բոլոր յատեան ածի։
Մահն և բնութին յոյժ
երկիցեն,
մինչ ստեղծուածք համ յառ֊
նիցեն։
զի դատողին համարս տայ֊
ցեն։
Գիրք գրեցեալ յառաջ բերի,
բոլորն ՚յորում պարունակի,
ուստի աշխարհ խստադատի։
Մինչ դատաւորն յատեան
նստցի,
որ ինչ թաքչի արտաքսցի,

ո՜չ ինչ անվրէժ յայնժամ
թողցի։

Զի՞նչ անդ թշուառս եմ
ոգելոց,
կամ զո՞ր միջնորդ աղերսե-
լոց,
մինչ են հազիւ արդարք կե-
լոց։

Ր. րքայդ սարսափելւոյ մեծութե՟։
զձիր ընձեռօղ կենդանութե՟։
կեցո՛ զիս աղբիւր գթութե՟։

Յիշեա՛ Յ՟ս գթած Տ՟ր իմ,
որ մարմնացար 'ի պատճառս
իմ,
մի՛ մերժեր զիս մինչ դատո-
ցիմ։

Ի խնդրել զիս նստար խոն-
ջեալ,
փրկեցեր զիս 'ի խաչ ելեալ,
տա՛ւր զի նցեմ քեւ փրկեցեալ։

Ր.ր-

Արդար դատող վրէժխնդ-
րութէ,
զձիր շնորհեա՛ ինձ թողութէ,
յառաջ քան զօր դատողութէ։
Իբեր յանցաւոր միշտ տա-
գնապիմ,
զի շառագնեն մեղք զերեսս
իմ,
ինձ մաղթողիս ներեա՛ Տ̃ր իմ։
Որ զՄարիամ արձակեցեր,
աւազակին իսկ ներեցեր,
զյոյս ինձ եւս մեծ շնորհեցեր։
Աղերսանք իմ ոչ ինչ արժեն,
բայց գթութ̃դ ա՛ռ քեզ
ելցեն,
զի մի՛ գեհեանք զիս կիզիցեն։
Ի մէջ յօդեաց զատեղի շնոր-
հեա՛,
յայծեաց ի բաց զիս որոշեա՛,
յաջակողմանն քում զետեղեա՛։

Մ՛ինչ զանիծեալս տարաբե֊
րիցես,
հրոյն կիզոյն առ մատնիցես,
զիս ընդ օրհնեալս հրաւի֊
րիցես:

Պախօք կորեւք զքեզ աղեր֊
սեմ,
զսիրտ իմ փղձկեալ քեզ նո֊
ւիրեմ,
զհոգ վախճանի իմ քեզ
յանձնեմ:

Օր արտասուաց օրն այն
լինէ՛,
մինչ յաճիւնից նա յառնիցէ,
որ ըստ մեղաց դատելի է՛:

Սմին ուրեմն Ա՜Ծ ներեա՛,
գթութ՜բ քով Յ՜Ս խնայեա՛,
և զհանգիստ յարաշնորհեա՛:

Ա՜մէն:

Սաղ֊

Մաղթանք ի ժամու ննջման :

Յանուն Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն սրբոյ Ամէն :
Զ գիշերս հանգիստս , և զվախճանս կատարեալս , շնորհեսցէ մեզ Տր ամենակա_ րող : Ամէն :
Օգնութիւն է՛ մեզ ՚յանու_ ՚անէ Տն՝ որ արար զեր_ կինս , և զերկիր :
Հայր մեր : Ողջոյն քեզ :
Խոստովանիմ Ա.յ , և այլն :

Աղօթեսցուք :

Այց արա աղաչեմք Տէր բնակութեան այսմիկ , և զա_ մենայն նենգութիւն թշնա_ մւոյն ՚ի նմանէ ՚ի բաց մեր_ ժեա , և հրեշտակք քոյք սբք բնակեսցեն ՚ի նմա , որք և

զմեզ 'ի խաղաղութեան պահ-
պանիցեն , և օրհնութիւն քո
լիցի 'ի վերայ մեր միշտ , Տէր
մերով Յիսուսիւ Քրիստոսիւ : Ամէն :

Առ պահապան Հրեշտակին :

Ո՛վ հրեշտակ Աստուծոյ , որ ես
պահապան իմ , յանձնեալ
զիս քեզ , լուսաւորեա՛ զիս
աղաչեմ այսօր գթութեամբ
վերնականաւ պաշտպանեա՛
իսկ զիս , հովանեա՛ և կառա-
վարեա՛ : Ամէն :

Աստուած որ զանսահմանակա-
նաւ կարգիւ զսպասաւորու-
թիւն հրեշտակաց , և մարդ-
կան անօրինես , շնորհեա՛ մեզ
այցարար , զի որովք քեզ
յանդիման եղելովք պաշտօն
քեզ 'ի յերկինս մատուցանի ,
նոքօք և կեանք մեր 'ի յերկրի
պաշ-

պաշտպանանիցն , Տրբ̃ մերով
Յսւ. Քսւ : Ամէն:

Յիշատա՛կ Աստուածածնին :

Ո՛վ ամենաարքուհի մայր մերոյ փրկչին , որ ես դուռն ընդ անցս երկնի , և աղ ծովու : Օգնեա՛ աղաչեմք ժողովրդեանս գթեցելոյ , ոչ զի շարժիցէ նոցին այ- ցելուն : Դու որ ծնար ՚ի սքանչուելս բնութե , զո̃ն քո արարիչ , կոյս նախկնա- գոյն , և վերջնագոյն : Որ ՚ի բերանոյն Գաբրիէլի ըն- կալար զողջոյնն զայն , մե- ղաւորացս յար գթա՛ :

Հրեշտակ Տն̃ աւետեաց Մարիամու : Եւ յղացաւ ՚ի Ոգւոյն սրբոյ :

Աղօթք:

Զշնորհս քոյ աղաչեմք, և այնում ՚ի վերայ:

Տ՜ր որ զպատրաստեալս յանխնա-
մակալաց կենաց երանու-
հւոյն Մարիամու Աստուա-
ցելով կուսութեամբն սուրբ
մարդկային ընծայեցեր,
շնորհեա՛ մեզ աղաչեմք, զի
զնա վասն մեր բարեխօսել
զգայցուք, որով արդիւնա-
ւորեցաք զպատրաստելիքն կենաց
ընդունիլ, զՏէրն մեր Յ՜ս
Ք՜ս: Ամէն:

Ողջոյն քեզ Թագուհի երկնից
Տ՜կն ամբուհի հրեշտակաց:
Սալվէ արմատ կենաց:
Ողջոյն քեզ դուռն յոր լոյս
աշխարհի ծագեցաւ:
Ողջ լեր ով ամենագեղեցիկ,

և

և վս̅ մեր զՔ̅ս աղերսեմ ։
Արժանացո՛ զնս գովել զքեզ
կոյս սրբազան ։
Եւ տո՛ւր ինձ զօրութիւն ընդ-
դէմ թշնամեաց քոց ։

Աղօթք ։

Ընդունեա՛ ամենակարող Տ̅ր
նո՛ւաստութե̅ մերում զնու-
իրս, զի որ զ յիշատակ
սրբուհւոյ Ա̅ծածնին միշտ
տօնեմք, օգնութեամբ նորին
բարեխօսութեանն՝ ՚ի մերոց
յառնիցեմք ՚յ անկումնութենէց ։
Տ̅ն մերով Յ̅ի Ք̅ի ։ Ամէն ։
Ուրախ լե՛ր թագուհի երկ-
նից ալէլուիայ ։
Քանզի զոր ՚ի քեզ կրել ար-
ժանաւորեցար, ալէլուիայ ։
Յարեաւ ահա որպ̃ ասացն,
ալէլուիայ ։ Խնդա՛ և ուրախ
լե՛ր

լե՛ր կոյս Մարիամ, ալէլու-
իայ: Զ ի ճշմարտապէս յա-
րեաւ Տէրն ալէլուիայ:

Աղօթք:

Ած որ յարութեամբ որդւոյ քո Տն մերոյ Յի Քի զաշխարհս ուրախացուցեր, շնորհեա՛ աղաչեմք զի ՚ի ձեռն նորին ծնողի կուսին Մարիամու, ընդունիցիմք զխնդութիւն կենաց մշտնջենաւորաց, նովին Յիւ Քիւ Տն մերով: Ամէն:

Ողջ լե՛ր Թագուհի մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն, և յոյս մեր ողջ լե՛ր: Ա՛ռ քեզ վերագոչեմք աքսորեցեալքս Եւայի որդիքս: Ա՛ռ քեզ յար հառաչեմք, հեծեծելով և ողբալով յայսմանէ

մանէ արտասուաց վայրէ , աղէ ուրեմն ո՜վ փառաւորեալն մեր , դարձո՛ առ մեզ ողորմած աչուներս հայեցուածս քոյոց աչաց : Եւ զՅս բարեբանեցեալ պտուղ որովայնի քո , զկնի այսր աքսորականի վայրիս ցոյց մեզ, ո՜վ համեղաբարոյ , ո՜վ գթած ո՜վ քաղցր կոյս Մարիամ : Աղօթեա՛ վս մեր սբհի ԱԾածին : Զի խոստմանցն Քի արժանաւորիցուք :

Աղօթք :

Ամենակարող և մշտնջենաւոր ԱԾ , որ փառաւորին մօրն և կուսին Մարիամու զհոգի և զմարմինն , Ոգւոյն սրբոյ գործակցութե՛ նախապատրաստեցեր , մինչ զի

վայելչականն տաղաւար ար-ժանաւորեսցուք լինել Որդւոյ քում : Տո՛ւր մեզ աղաչեմք, զի որք նորին յարայիշելու-թեան հրճուեմք, նորին եւ գթածիւ բարեխօսութեան՝ ի չարեաց մեզ ա՛ռ կացելոց, եւ՝ ի յաւիտենականն զերծա-նիցեմք մահուանէ : Տ՟ր մե-րով Յ՟իւ Ք՟իւ : Ամէն :

Աղօթք մերձ ա՛ռ անկողինն ասելիք :

Լուսաւորեա՛ Տ՟ր Ա՟Ծ ա-ղաչեմք զխաւարս մեր, զնենգութիս բոլորի այսորիկ գիշերիս տարամերժեա՛ ՝ի մէնջ, զի դու ես այցելու մեր : Տ՟ր մերով Յ՟իւ Ք՟իւ : Ամէն :

Գոհանամք զքէն Թագաւոր Ա՛Ծ ամենակարող, յաղագս համայնից բարերարութեանց քոց 'ի քէն առ մեզ եղելոց: Աղաչեմք Տէր հասո՛ ամենից մերոց՝ յանուն քո մե՛ծ բարերարաց, զկեանս յաւիտենականս, մեք բարեաց զորս արարեր մեզ: Փառք ամենեցուն հաւատացելոց նոննջեցելոց շնորհիւ և ողորմութեան Ա՛յ հանգիցեն 'ի խաղաղութե: Ամէն:

Այլ խնմ Աղօթք:

Ո՛վ մշտնջենաւոր և ողորմած Ա՛Ծ, անհաւատալի ես նուաստացուցանել ստեղծուած քո, ըստ կարի խմաց և գիտութե անկեալ յերկինս աւանջի քոյոյ մեծութեան, վերլու-

վերընծայեմ քեզ զհամայնս զոհութիւնս, զորս կարէ հաւատարիմ ոք ծառայ նուիրել խորան Տն̃ առատաբաշխի, վս̃ անթուելեաց բարերարութեանց, զորս մինչեւ ցայժմ ինձ արարեր: Եւ հայցեմ ՚ի քէն վս̃ քոյոյ գթածի բարեհաճութեան, մի՛ անտես առնիցես զիս, զի մի՛ անկանիցիմ ՚յաչաց քոց: այլեւ զոհանամ զքէն, եւ բարեբանեմ զքեզ, վասն զի յաւուր այսմիկ բարեգթապէ՛ս պահպանեցեր զիս, ազատեցեր, եւ պահեցեր ՚ի բազմաց վտանգից, ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, թէ եւ վասն մեղաց իմոց արժանի էի ՚ի բաց մերժիլ ՚ի քէն:

Ուստի

Ուստի ՚ի խորոց սրտի խնդրեմ աղաչաւեմ զյանցանս զորս գործեցի այսօր ընդդէմ քում հանդխաալեհութեանդ , մ̄ն ոչ սիրելոյ զքեզ , և մ̄ն ոչ ընդունելոյ և պահելոյ զպատուիրանս քոյս , ըստ որում պարտէր ինձ առնել ։ Արդ՝ շնորհեա ինձ ո՛վ մարդասէր Տէր անցուցանել զգիշերս զայս խաղաղական հոգւով, Թարց անկանելոյ ՚ի ցնորս դիւականս , քանզի ՚ի ձեռս քոյս յանձն առնեմ ՚ի գիշերիս՚ յայսմիկ, և զամենայնս աւուրս կենաց իմոց զհոգի և զմարմին իմ ։ Պահեա ուրեմն պահպանեա և ազատեա զիս ՚ի գիշերիս յայսմիկ, և ՚յամենայ-

նայնում ժամու, 'ի փառս
քոյս 'ի պատիւ ամենեբանե-
ցելոյ սրբուհւոյ կուսին Մա-
րիամու, 'ի փրկութիւն հոգւոյ
իմոյ, և 'ի յօգուտ մերձաւո-
րաց իմոց: Ամէն:

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ։

ՈՐԴԻ Ա՟Յ ԿԵՆ-
դանւոյ , օրհնեալդ
՚յամենայնի , Հօրդ
անհասաւորի անքննելի
ծնունդ ։ Որ անկարօտանայ ա՛ռ
՚ի քէն և ո՛չ ինչ ։ Որ ՚ի ծա-
գել անստուերնշուլից ողոր-
մութե՟ քոյ փառաց , հալին
մեղք , հալածին դեւք , ջնջին
յանցանք , խզին կապանք ,
խորտակին շղթայք , կենդա-
նածնին մահացեալք , բժշ-
կին հարուածք , ողջանան
վէրք , բառնին ապականու-
թիւք , տեղի տան ախտու-
թիւք , նահանջին հեծութիւնք
փախ-

փախնուն խաւարն , մեկնի
մեգն , մերժի մառախուղն ,
փարատի մռայլն , սպառի ա-
ղջամուղջն , վերանայ մութն ,
գնայ գիշերն , տարագրի տագ-
նապն , չքանան չարիքն ,
հալածին յուսահատութիւնք ։
Եւ թագաւորէ ձեռն քո
ամենակալ՝ քաւիչդ ա̃մի , որ
ոչ եկիր կորուսանել զմար-
դկան հոգիս՝ այլ կեցու-
ցանել , Թող ինձ զանթիւ
չարիսն իմ , բազում ողոր-
մութեդ ։ Ով դու ձայն
ես երկնին անձայն՝ և երկրի
անդնդնին , ՚ի տապըր գոյից՝ և
յեզր ծագաց աշխարհի ։ Անկի-
զբն ա̃մի՝ և ՚յ ա̃մի , ա̃միւ
լրմամբ օրհնեալդ ՚ի բար-
ձունս , և քեզ ընդ Հօր և

Ոգւոյդ

Ոգւոյն սրբոյ՝ վայելէ փառք յաւիտեանս ։ Ամէն ։

Աղօթք իւրաքանչ իւրոց անձանց հա_
ւատացելոց ՚ի Քս,զորս արարեալ է
Տն Ներսէսի հայոց Կաթուղիկոսի ։

ՀԱՒԱՏՈՎ խոստովանիմ և եր_
կիրպագանեմ քեզ՝
Հայր և Որդի և սբ Հոգի՝ ա_
նեղ և անմահ բնութիւն, ա_
րարիչ հրեշտակաց և մարդ_
կան և ամենայն եղելոց, և
ողորմեա՛ց քոց արարածոց ։
Հաւատով խոստովանիմ և
երկիր պագանեմ քեզ՝ անբա_
ժանելի լոյս միասնական սբ
Երրորդութի՝ և մի՛ Ածու_
թի, արարիչ լուսոյ՝ և հա_

լածից խոհականի, հալածեա՛ն
՚ի հոգւոյ իմմէ զխոհական մե֊
ղաց և անգիտութե, և լու֊
սաւորեա՛ն զմիտս իմ ՚ի ճա֊
մբաս ՚յայսմիկ աղօթել քեզ
՚ի հաճոյս՝ և ընդունիլ ՚ի քէն
զխնդրուածս իմ ։ և ողոր֊
մեաց ինձ բազմամեղիս ։
Հայր երկնաւոր՝ Ա̃Ծ ձրիա֊
բխա, որ առաքեցեր զՈրդի֊
քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ
ոչխարին մեղայ ՚յերկինս և
առաջին քոյ, ընկա՛լ զիս ո̃պ
զանառակ որդին, և զգեցո՛
ինձ զպատմուճանն զառա֊
ջին, զոր մերկացայ մեղօք ։
և ողորմեաց քո՛ց ասա ։
Որդի Մ̃ Ա̃Ծ ձրիաբաշխիդ՝ որ
խոնարհեցար ՚ի հայրականն
ծոցոյ, և առեր զմարմին ՚ի

սր֊

սրբուհւոյ կուսէն Մարիամայ
ըն մերոյ փրկութեան, խաչեցար
և թաղեցար՝ և յարեար ՚ի
մեռելոց՝ և համբարձար առ
հայր, մեղայ ՚յերկինս և
առաջի քո, յիշեա զիս որպ՟
զաւազակն՝ յորժամ գաս
արքայութ՟ քով և ողորմեաց·
ինձ բազմամեղիս:
Որդի Ա՟յ Ա՟ծ ճշմարիտ, որ
իջեր ՚ի յորդանան և ՚ի մկր-
տութիւնն, և լուսաւորեցեր
զիս մկրտութ՟ սբ՟յ աւազա-
նին, մեղայ ՚յերկինս և ա-
ռաջի քո, մաքրեա զիս վեր-
ստին Ա՟ծային հրով քով, որպ՟
հրեղէն լեզուօք զառաքե-
ալսն: և ողորմեա՛ց քոց:
Անեղ բնութիւն մեղայ քեզ՝
մտօք խոկմբ՝ հոգւով և մար-

ձայնով իմով , մի՛ յիշեր զմեղս
իմ զառաջինս՝ վ՟ս անուանդ
քում սրբոյ ։ և ողորմեա՛ց ինձ ։
Տեսող ամենայնի , մեղայ
քեզ , խորհրդով , բանիւ , և
գործով , ջնջեա՛ զձեռագիր
յանցանաց իմոց՝ , և գրեա՛
զանուն իմ ՚ի դպրութիւն կե-
նաց ։ և ողորմեա՛ց քոց ։

Քննող գաղտնեաց մեղայ
քեզ՝ կամաւ և յակամայ , գի-
տութեամբ և անգիտութեամբ ,
թողութիւն շնորհեա՛ մե-
ղաւորիս , որ ՚ի ծննդենէ
աւազանին մինչև ցայսօր՝
մեղուցեալ եմ առաջի Ա՟ծ-
ութեդ քո , զգայարանօք
իմօք , և ամենայն անդամօք
մարմնոյս , և ողորմեաց ինձ
բազմամեղիս ։

Ամէ-

Ամենախնամ Տէ՛ր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սէ՛ր՝ ո՛չ ևս հայիլ արատ, և ականջաց իմոց ո՛չ ախորժիլ լսել զբանս չարութե, և բերանոյ իմոյ ո՛չ խօսիլ զստութի, և սրտի իմոյ ո՛չ խորհիլ զչարութի, և ձեռաց իմոց ո՛չ գործել զանիրաւութի, և ոտից իմոց ո՛չ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութե, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց ամենայնի, և ողորմեաց քոց արարածոց:

Հուր կենդանի Քր՛ս՝ զհուր սիրոյ քոյ, զոր արկեր ՚յերկիր բորբոքեա՛ ՚յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց

և մաքրեսցէ զմեղս մարմնոյ
իմոյ, և վառեսցէ զլոյս գի_
տութեան քո 'ի սրտի իմում ։
և ողորմեաց ինձ ։

Իմաստութիւն հօր Յ̅ս՝ տո՛ւր
ինձ զիմաստութիւն զբարիս
խորհել և խօսել և գործել
առաջի քո 'յ ամենայն ժամ,
'ի չարեաց խորհրդոց 'ի բանից
և 'ի գործոց փրկեա՛ զիս ։ և
ողորմեաց քոց ար ։

Կամեցող բարեաց՝ Տ̅ր կա_
մարար, մի՛ թողուր զիս 'ի
կամս անձին իմոյ գնալ, այլ
առաջնորդեա՛ ինձ լինել միշտ
ըստ կամաց քոց բարեսիրաց ։
և ողորմեաց ինձ բազմամեղի ։

Արքայ երկնաւո՛ր՝ տո՛ւր ինձ
զարքայութիւն քո, զոր խոս_
տացար սիրելեաց քոց, և

զօ_

զօրացո՛ զկամս իմ ատել զմե_
ղս, և սիրել զքեզ միայն՝ և
առնել զկամս քո։ և ողոր_
մեաց քոց արարածոց։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛
նշանաւ խաչի քո զհոգի և
զմարմին իմ, ՚ի պատրանաց
մեղաց՝ ՚ի փորձութեանց դի_
ւաց՝ և ՚ի մարդոց անիրա_
ւաց, և ՚յամենայն վտանգից
հոգւոյ և մարմնոյ։ և ողոր_
մեաց ինձ բազմամեղիս։

Պահապան ամենայնի Քրս՝
աջ քո հովանի լիցի ՚ի վր իմ
՚ի տուէ և ՚ի գիշերի, ՚ի նստել
՚ի տան՝ և ՚ի գնալ ՚ի ճանա_
պարհի, ՚ի ննջել և ՚ի յառնել՝
զի մի՛ երբեք սասանեցայց։
և ողորմեաց քոց արար։

Ած իմ՝ որ բանաս զձեռն
քո

քո եւ շնուս զամենայն տրա-
րածս ողորմութե քով, քեզ
յանձն առնեմ զանձն իմ դու-
հոգւմ եւ պատրաստեմ ըղ-
պէտս հոգւոյ , եւ մարմնոյ
իմոյ յայսմ հետէ մինչեւ յա-
ւիտեան ։ եւ ողորմեաց ինձ
բազմամեղիս ։

Պարծուցիս մոլորելոց` դար-
ձի՛ր զիս ՚ի չարեաց սովորու-
թեց իմոց ՚ի բարի սովորու-
թի, եւ բնեռեա՛ ՚ի հոգի իմ
զատակալն օր մահուան` եւ դեր-
կեալ գեհենոյն` եւ զանէր ար-
քայութեն , զի զղջացայց ՚ի
մեղաց` եւ գործեցից զարդա-
րութիւն եւ ողորմեաց քոց
արարածոց ։

Նշխուր անմահութե` աղ-
բիւրացի ՚ի սրտէ իմմէ զար-

տաս-

տասուս ապաշխարութեան որպ
պոռնկին, զի լուացից զմեղս
անձին իմոյ յառաջ քան զե֊
լանելն իմ՝ յաշխարհէս ։ Եւ
ողորմեաց ինձ բազմամեղիս ։
Պարգեւիչ ողորմութեան՝ պար֊
գեւեա ինձ ուղղափառ հա֊
ւատով եւ բարի գործով, եւ
սբյ մարմնոյ եւ արեան քո
հաղորդութեամբ գալ առ քեզ ։
Եւ ողորմեաց քոց ար ։
Բարերար Տէր՝ հրեշտա֊
կի բարւոյ զիս յանձնեցեալ
արժանացուսցես, քաղցրու֊
թբ աւանդել զհոգի իմ եւ
անխռով անցուցանել ընդ֊
չարութեն այսոցն, որք են
՚ի ներքոյ երկնից, եւ ողոր֊
մեաց ինձ բազմամեղիս ։
Լոյս ճշմարիտ Քս՝ արժա֊
նա֊

նաւորեմ զհոգի իմ ուրա-
խութբ տեսանել զլոյս փա-
ռաց քոց ՚ի կոչման աւուրն ,
և հանգչիլ ընդ արդարսն :
և ողորմեաց քոց արար :
Պատուական արդար՝ յորժամ
գաս փառօք Հօր դատել
զկենդանիս և զմեռեալս , մի
մտաներ ՚ի դատաստան ընդ
ծառայիս քոյ , այլ փրկեա՛
զիս ՚ի յաւիտենական հրոյն ,
և լսելի արա՛ ինձ զերանա-
ւէտ կոչումն արդարոց ՚յեր-
կնից արքայութենդ : և ողոր-
մեաց ինձ բազմամեղիս :
Բազմողորմ Տէր՝ ողորմեա՛ց
ամենայն հաւատացելոց ՚ի
քեզ , իմոց և օտարաց ծա-
նօթից և անծանօթից՝ կե-
դանեաց և մեռելոց , շնոր-
հեա՛

հեամ եւ Թշնամեաց իմոց եւ
ատելեաց զթողութի՛, որ սա-
կա յանցանաց՝ եւ դարձ զնո՛
՚ի չարեացն ; զոր ունին ընդ
իմ , զի ողորմութեան քում
արժանիք եղիցին , եւ ողոր-
մեաց քոց արարածոց :
Փառաւորեալ Տէր ընկա՛լ
զաղաչանս ծառայիս քո , եւ
կատարեա՛ ՚ի բարին զխնդրու-
ածս իմ : Բարեխօսու-
թեամբ սրբուհւոյ Ածածնին
եւ Յովհաննու Մկրտչին՝ եւ
սրբոյն Ստեփաննոսի նախա-
վկային՝ եւ սրբոյն Գրիգորի
Մերոյ լուսաւորչին , եւ սրբոց
առաքելոց՝ եւ Մարգարէից՝
եւ Վարդապետաց՝ եւ Մար-
տիրոսաց՝ եւ սրբոց հայրա-
պետաց՝ եւ Ճգնաւորաց՝ եւ

Կուսածնայ՝ և ամենայն սր_
բոց քոց՝ Երկնաւորաց և
Երկրաւորաց ։ Եւ քեզ
փառք և երկրպագութիւն ան_
բաժանելոյ սրբոյ Երրոր_
դութեանդ , յաւիտեանս
յաւիտենից ։ Ամէն ։

Մաղթանք ։

Վ̅ս̅ սրբուհւոյ անապական
մօր քո և կուսի , Տ̅ր̅ ընկալ
զաղաչանս մեր և կեցո ։

Քարոզ ։

Սրբուհի զԱ̅ծ̅ածինն՝ և զա_
մենայն սուրբս բարեխօսս ա_
ռաջուք առ Հայր ՚ի յերկինս,
զի կամեցեալ ողորմեսցի և
գթացեալ կեցուսցէ զարա_
րածս իւր ։ Ամենակալ Տ̅ր̅
Ա̅ծ̅ մեր՝ կեցո և ողորմեա ։

## Աղօթք առ ամենասրբուհի կոյսն Մարիամ Աստուածածին:

Փառաւորեալ եւ ամենօրհնեալ սրբուհի միշտ կոյս Աստուածածին Մարիամ բարեխօսեա՛ վասն իմ մեղաւորիս առ միածին որդին Յիսուս Քրիստոս Տէրն մեր, որ զօրութեամբ սրբոյ Պատարագիս, զոր դառնակսկիծ չարչարանօք իւրովք սահմանեաց 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ՝ աղաչեսցի ինձ շնորհելով զթողութիւն ամենայն մեղաց իմոց՝ որոց լիով սրտիւ զղջամ եւ յառաջադրեմ այլ ո՛չ եւս մեղանչել, միջնորդութեամբ իւր ամենազօր օգնութեամբ: Ամէն:

Նշանակութիւնք խորհրդոց մէջ Պա-տարագին 'ի վերայ չարչարանաց Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի։

## Աղօթք։

Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս որ վ՟ն փր-կութեան մերոյ հաստատե-ցեր զխորհուրդ մէջ Պատա-րագիս 'ի յիշատակ չարչա-րանաց քոց աղաչեմ զքեզ, տո՛ւր ինձ այնքան շնորհ և օգնութիւն զի կարացից մտա-դրութեամբ լսել զնա, և նուա-չահիլ զպտուղ չարչարանաց քոց ։ Ամէն։

քահանայն երթալով ՚ի սեղանն նշա-
նակէ զՔրի երթալն ՚ի Պարտէզն ։

## Աղօթք ։

Տր իմ Յս Քս որդի Այ կենդանւոյ որ ՚ի մերձենալ ժամու չարչարանաց քոց ընկալար տրտմիլ և տխրել շնորհեա՛, ինձ զի յօժարութբ համբերեցից ամենայն նեղութեց, իմոց վսն սիրոյ քոյ որ ես Ած սրտի իմոյ, և զօրութի չարչարանաց քոց եղիցի ինձ փրկարար ։ Ամէն ։

Քահանայն սկսանիլն զՊատարագն
Նշանակէ զՔսի աղօթելն 'ի
մէջ Պարտիզին ։

## Աղօթք ։

Տ͞ր իմ Յ͞ս Ք͞ս որդի Ա͞յ կենդանւոյ, որ աղօթելով 'ի մէջ պարտիզին կամեցար զօրանալ 'ի հրեշտակէ, շնորհեա՛ ինձ, զի զօրութ͞ե ա͞մ աղօթից քոց հրեշտակըն քոյ միշտ օգնեսցէ ինձ ամենայն աղօթս իմ ։ Ամէն ։

Քահանայն յորժամ ած՝ ասէ զխոստովանելին նշանակէ զՔի անկանելն ՚ի վերայ երեսաց. և զքրտնելն արեան :

## Աղօթք :

Տէր իմ Յսի Քսի որ աղօ-
թելով քով ՚ի մէջ պարտիզին
առ հայրն երկնաւոր ՚ի սաս-
տիկ տրտմութենէդ հոսեր
զքրտունս արեան ամենայն
երեսաց քոց՝ շնորհեա՛ ինձ զի
և ես յիշելով զչարչարանս
քո հանապազ հեղից ՚յա-
չաց իմոց զաղբիւր արտա-
սուաց : Ամէն :

քահանայն յորժամ ելանէ 'ի բեմն և համբուրէ զնա՝ նշանակէ, յորժամ Քս̄ գնաց 'ի դէմ Յուդայի և համբուրին մատնեցաւ 'ի նմանէ :

## Աղօթք :

Տր̄ իմ Յս̄ Քս̄ որ յանձն առեր համբուրիւ մատնիլ 'ի յանօրէն Յուդայէ՝ շնորհեա՛ ինձ զի մի՛ երբէք մատնեցից զքեզ , այլ զի սիրեցից և բարի արարից ամենից զրպարտողաց և հալածչաց իմոց : Ամէն :

Քահանայն գնալով 'ի գրքին կողմն նշանակէ զՔսի կապելն 'ի հրէից ։

## Աղօթք ։

Տր̅ իմ Յս̅ Քս̅, որ յանձն առեր կապել 'ի հրէից ա֊ղաչեմ զքեզ արձակեա́ զիս 'ի կապից մեղաց իմոց և կապեա́ զիս կապանօք ա֊մենասուրբ օրինաց քոց՝ ոմ̅ զի ամենայն զօրութբ̅ հո֊գւոյ և մարմնոյ իմոյ կարա֊ցից քեզ անդադար ծա֊ռայել ։ Ամէն ։

Քահանայն կարդալով զպատարագ-
մաւոր նշանակէ զՔ̃ն ապաւինելն 'ի
տան քահանայապետին Աննայի ։

## Աղօթք ։

Տ̃ր Յս̃ Ք̃ս որ յանձն
առեր դատիլ 'ի բերն զմե-
ղապարտ առաջի քահա-
նայապետին Աննայի ե-
ւանիրաւաբար ապտակիլ 'ի
ծառայէ նորին, շնորհեա՛ զի
մի՛ երբէք անկայց 'ի մեղս
այլ շնորհ Ոգւոյ սրբոյ զիս
միշտ զօրացուսցէ 'ի պահել
զպատուիրանս քո ։
Ամէն ։

քահանայն յորժամ ասէ՝ Քիրիէ էլէիսօն, նշանակէ զՊետրոսի ուրանալն զՔս̄ ի տան քահանայապետին Կայիափայի ։

## Աղօթք ։

Տր̄ իմ Յս̄ Քս̄ որ ՚ի տան Կայիափայի երիցս անգամ ուրացեալ եղեր ՚ի Պետրոսէ վիմէն, աղաչեմ զքեզ ՚յընկերութենէ անհաւատից մարդոց, զի մի՛ ըստ չար օրինակի նորին և ես գործելով զմահացու մեղս, ՚ի քէն հեռացայց ։ Ամէն ։

*Քահանայն յորժամ խաղաղութիւն տայ ժողովրդեանն, նշանակէ զՔրիստոսի հայելն 'ի Պետրոս, և զնորա զզջումն։*

## Աղօթք։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ հայեցող 'ի մեղուցեալն Պետրոս բղխեցուցեր 'յաչաց նորա զարտասուս ապաշխարութե շնորհեա՛ և ինձ հանապազ լա՛լ զմեղս իմ, և ո՛չ ևս երբէք քեզ բարկացուցանել մեղօք իմովք, որ ես Աստուած իմ, և բարութիւն իմ։ Ամէն։

Քահանայն յորժամ կարդայ զաղօթս, և զգիրգն՝ նշանակէ զՔսի ածիլն առ Պիղատոս ։

## Աղօթք ։

Տէր իմ Յսս Քսս, որ յանձն առեր գնալ յատեանն Պիղատոսի, և առաջի նորին դատիլ և ամբաստանիլ, ուսո՛ ինձ աղաչեմ զքեզ, յաղթահարել զամենայն նենգութիւնս ամբարիշտ մարդոց, և մինչ բարի գործովք դաւանիլ զամենասուրբ հաճոյս քո ։ Ամէն ։

Քահանայն յորժամ ՚ի մէջ սեղանոյ աղօթէ վասն կարդացողաց զաւետարանն, նշանակէ յորժամ զՔս տարան առ Հերովդէս :

## Աղօթք :

Տէր իմ Յս Քս, որ առաջի Հերովդէի համբերութեամբ լռեցեր չարախօսացն քոց, և յանձնառու էր զկատականս նոցա, շնորհեա ինձ, զի մի՛ անհամբերութիւնք զրպարտողաց իմոց տատանեցուսցեն զիս, և մի՛ սրբազան խորհուրդք քո արհամարհեսցին կատականօք յանօրէն մարդոց :

Ամէն :

Քահանայն յորժամ ասէ զամենասուրբն՝
և զհամատարածն՝ նշանակէ զբերելն
յետ ատենին զՔ͞ի առ Պիղատոս ։

## Աղօթք ։

Տ͞ր իմ Յ͞ս Ք͞ս, որ ՚ի Հե-
րօդէէ առ Պիղատոս կրկին
դարձեալ, զնոսին վերստին
բարեկամս լինել կամեցար,
շնորհեա՛ ինձ, զի մի՛ երկե-
այց ՚ի թշնամութենէ մարդ-
կանց, այլ՝ ՚ի թշնամութենէ
նոցա պտուղ ինչ շահիցեմ,
զի քեզ նմանակից յայսմ
լինել կարացից ։ Ա͞մն ։

Քահանայն բապատ գնելով՝ նշանակէ
զՔ̄ի ծեծելն 'ի հրէից ։

## Աղօթք ։

Տէր իմ Յ̄ս Ք̄ս, որ յանձն
առեր կապել 'ի ձեռնն իբրև
զմեղապարտ, և թոյլ ետուր
հրէից զքեզ անողորմաբար
գան հարկանել, շնորհեա՛
ինձ, զի յօժարութե̄ ըն-
կալայց 'ի քէն զհարուածս
զթութե̄ քո, և զի մի՛ եր-
բէք կամեցայց զքեզ գան
հարկանել մեղօք իմովք ։
Ամէն ։

Քահանայն ծածկելով զսկիհն՝ նշանակէ զՔսի փշով պսակելն 'ի հրէից ։

## Աղօթք ։

Տէր իմ Յսս Քս, որ վասն իմ ընկալար 'ի գլուխ քո զփուշեղէն պսակն, շնորհեա՛ ինձ զի 'ի վերայ երկրի համբերութեամբ ընդունելով ըզփորձութիւնս, և զտառապանս, արժանի եղէց քեզ պսակակից լինել 'յերկինս ։ Ամէն ։

Քահանայն յորժամ՝ լուանայ զձեռս իւր՝ նշանակէ զՊիղատոսի լուանալն զձեռս, և զասելն, քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ։

## Աղօթք։

Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս որդի Ա՟յ կենդանւոյ, որ թէպէտ անմեղ գտար առաջի Պիղատոսի դատաւորին, սակայն յանձնառու եղեր զդատապարտանս, և զամբաստանութիւն հրէից, շնորհեա ինձ, զի անմեղութեամբ կեցից յայսմ աշխարհի, և ոչ երբէք խռովեցայց յորժամ զրպարտեցիմ ՚ի թշնամեաց իմոց ։ Ամէն ։

Քահանայն յորժամ դառնայ առ ժո-
ղովուրդն, և ասէ՝ աղօթեցէք եղ-
բարք, նշանակէ յորժամ Պիղատոս
արտաքս էհան զՔս առ ժողովուրդն։

## Աղօթք։

Տր իմ Յս Քս, որ վս իմ
մեղաւորիս առաջի հրէից
ծաղր լինիլ յանձնառուեր,
շնորհեա ինձ, աղաչեմ զքեզ
զի մի՛ սնափառութե հպար-
տացայց, այլ՝ զի յաւուր
յետին ահաւոր դատաստա-
նին կարասցեմ քոյին ամբիծ-
զգեստուքն զարդարիլ։
Ամէն։

Քահանայն ասելով Արժան և իրաւ՝ նշանակէ զՔ̅ի դատապարտելն 'ի մահ։

## Աղօթք։

Տ̅ր իմ Յ̅ս Ք̅ս, որ վ̅ս իմ յանձնառուեր դատապարտիլ 'ի մահ խաչին, շնորհեա՛ ինձ, զի և ես վ̅ս սիրոյ քոյ յօժարութ̅բ յանձնառուեցից զամենայն սաստիկ, և զանողորմ տանջանաց պատիժս, և զի մի՛ զընկերն իմ անզգամութ̅բ դատեցից։ Ամէն։

Քահանայն յորժամ՛ յիշատակէ զննջեցեալսն՝ նշանակէ՝ յորժամ՛ Քս̄ խաչն ՚ի յուսին բարձեալ գնայր ՚ի գողգոթայ։

## Աղօթք։

Տր̄ իմ Յս̄ Քս̄, որ վս̄ իմ մեղաւորիս զխաչչարչարանս յուսով բարձեր, շնորհեա՛ զի և ես զխաչն նեղութեց յօժար սրտիւ յանձն առից, և վս̄ քոյ սիրոյդ անտր-տունջ համբերից նոցա։

Ամէն։

Քահանայն յորժամ դնէ զձեռս 'ի վե֊րայ սկիհին, նշանակէ զպաղատութիւն Քսի սբ պատկերին 'ի վերայ դաս֊տառակին Վերօնիկեայ։

## Աղօթք։

Տր իմ Յս Քս, որ հա֊սեալ 'ի տեղի խաչելութեանն ասացեր ցլալականն կանայսն, մի՛ լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձանց ձե֊րոց, շնորհեա՛ ինձ աղաչեմ զքեզ, զի լացից զմեղս իմ, և ուսո՛ ինձ զսէր, և զողոր֊մութիւն, զի հաճոյ գտայց առաջի աչաց քոց։ Ամէն։

Քահանայն յորժամ օրհնէ զնծայսն, նշանակէ յորժամ զՔս բևեռեցին ՚ի վերայ խաչին ։

## Աղօթք ։

Տր̅ իմ Յս̅ Քս̅, որ վա̅ իմ ՚ի խաչ ելանել կամեցար, բևեռելով ընդ քեզ զմեղս մեր, և զմահ մեր, աղաչեմ զքեզ, բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի պահելով զպատուիրանս քո՝ քեզ խաչակից լինել արժանացայց ։ Ամէն ։

Քրա-

Քահանայն բարձրացուցանելով զՍբ նշխարն՝ նշանակէ յորժամ ՚ի վեր բարձրացուցին զխաչեալն Քս։

## Աղօթք։

Տր իմ Յս Քս, որ վա իմ մեղաւորիս յանձնառուեր խաչիւն ՚ի վեր բարձրանալ ՚յերկրէ, աղաչեմ զքեզ բարձ յինէն զսէր, և զցանկութիւն աշխարհիս, և բարձրացո զհոգի իմ ՚ի հայել միշտ ՚ի յերկնային բարիսն, զոր պատրաստեցեր սիրելեաց քոց։ Ամէն։

Քահանայն յորժամ բարձրացուցանէ զՍկիհն՝ նշանակէ զհեղումն սուրբ արեանն Քի ։

## Աղօթք ։

Տր իմ Յս Քս որ ՚ի մխր֊կարար վիրացդ քոց բղխեցուցեր զաղբեւրս շնորհաց , հեղլով զարիւն քո սբ ՚ի թողութիւն մեղաց մերոց շնորհեա ինձ , զի յորժամ ցանկութիւք մաքրմոյ զիս շարժես ՚ի մեղս ապաշխարեցայց ։ սու֊վէրս քոյս ՚յորոց զդեղ , և զփրկութիւն ընդունիլ արժանի եղէց ։ Ամէն ։

Քահանայն յորժամ՝ յիշատակէ զննջե֊ ցեալս, նշանակէ զաղօթելն Քի՛ ՚ի վերայ խաչին վ՛ն ազգի մարդկան։

Աղօթք։

Տէ՛ր իմ Յ՛ս Ք՛ս, որ ՚ի վե֊ րայ խաչին էր փրկութեան ազգի մարդկան, և էր խա֊ չողացն զքեզ աղօթեցեր առ Հայր քոյ երկնաւոր, շնոր֊ հեա՛ ինձ զհեզ, և զգթած֊ հոգի, զի ըստ օրինակի, և հրամանի քում սիրեցից զթշնամիս իմ, և ՚ի սրտէ քաւրի աղաւթից նոցա։ Ամէն։

Քահանայն յորժամ զկուրծն բախելով ասէ տուր և մեզ մեղաւորաց ։ Նշանակէ զդարձումն Երանեալ Աւազակին ։

## Աղօթք ։

Տր̅ իմ Յս̅ Քս̅, որ զփառս արքայութեան երկնից շնորհեցեր խաչակցին քում բարի Աւազակին, նայեաց 'ի յիս աչօք գթութեան քո, զի 'ի ժամ մահուան իմոյ արժանի եղէց լսել 'ի քէն, որ ես փրկիչ իմ, այսօր ընդ իս իցես 'ի դրախտին ։ Ամէն ։

Քահանայն առելով զհայր մերն նշա-
նակէ զեօթն բանսն, զոր խօսեցաւ
Քն՛ ՚ի վերայ խաչին ։

## Աղօթք ։

Տէր իմ Յս՛ Քս՛, որ ՚ի մէջ
այլոց բանից զկուսածին
Մայրդ՝ Յովհաննու յանձ-
նարարեր, եւ զՅովհաննէս
Մօրդ, շնորհեա ինձ զիս գը-
թութեամբ քո, զի եւ ես ընդ-
քեզ միամօրեցայց կուսա-
նոյն հրաբորբոք, եւ մխի-
թարական սիրոյդ, եւ ՚ի մէջ
ալեկոծութեանց, եւ վտանգից
աշխարհիս այսորիկ բարու-
թեամբ քո զիս պահպանես-
ցես ։ Ամէն ։

Քահանայն յորժամ բեկանէ զպատա-
ռեալ նշխարն, նշանակէ յորժամ Քս̃
աւանդեաց զիւր ս̃բ հոգին:

## Աղօթք:

Տր̃ իմ Յս̃ Քս̃, որ վասն սիրոյ իմոյ մեռանելով ՚ի վերայ խաչին՝ աւանդեցեր զսբ̃ զհոգիդ ՚ի ձեռս հօր, շնորհեա՛ և ինձ հոգևորապէս ընդ քեզ մեռանիլ, և ՚ի ժամ մահուան իմոյ ՚ի ձեռս քո աւանդել զհոգի իմ: Ամէն:

Քահանայն յայժամ զմասն մի նշխա-
րին արկանէ 'ի սկիհն, նշանակէ զի-
ջումն Քի 'ի դժոխսն ։

## Աղօթք ։

Տր իմ Յս Քս, որ խոր-
տակելով զզօրութիւն մահու,
և սատանայի իջեր առ ար-
դարսն 'ի դժոխսն, և ազա-
տեցեր զնոսա, զհոգիս հարցն
սրբոց, հե՛ղ զզօրութիւն
Ածային արեան քո 'ի հոգիս
հանգստացելոց ննջեցելոց,
զի արձակեալք 'ի մեղաց մտա-
ցեն 'ի փառսն յաւիտենա-
կանս ։ Ամն ։

Քահանայն յորժամ ասէ զայն Ամ նշանակէ զդարձն բազմաց 'ի ժամ մահուանն Քի մի սքանչելեացն զոր տեսին :

## Աղօթք :

Տր իմ Յս Քս, որ համբերելով անտանելի տանջանաց տարաբերի՝ զի բազումք բախելով զկուրծս իւրեանց դառնային, և լային զմեղս իւրեանց՝ շնորհեա՛ և ինձ արդեամբք չարչարանաց քոց 'ի խորոց սրտի զղջանալ 'ի մեղաց իմոց, և մի՛ ևս երբէք անկանել 'ի նոյնս : Ամէն :

Քահանայն ճաշակելով զմարմինն Քի՛
նշանակէ զթաղումն Քի ։

## Աղօթք ։

Տր̄ իմ Յս̄ Քս̄ , որ ՚ի նոր_ափոր գերեզմանի ծածկիլ, և թաղիլ կամեցար, տուր ինձ զսիրտ նոր, և զհոգի նոր, զի և ես թաղեալ, և ծածկեալ ընդ քեզ՝ արժա_նաւորեալ մասնակից լինել յա_րութեան քում ։ Ամէն ։

Քահանայն յորժամ՝ մաքրէ զմատունսն, և զ Սկիհն՝ նշանակէ զօծումն սուրբ Մարիամայն քեն, և զպատիլն սուրբ կտաւով։

## Աղօթք։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ յետ մահուանն քո յանձնառուեր իւ-ղով անուշիւ օծանել, և սուրբ կտաւով պատել ի Յովսէ-փայ, և ի Նիկոդեմոսէ, տուր ինձ կարողութիւն, զի արժանի եղէց սուրբ հոգւով ճաշակել զամենասուրբ մար-մինդ քո ։ Ամէն։

Քահանայն յորժամ աղօթէ յետ ճա-
շակմանն , 'նշանակէ զյարութիւն Քի ։

## Աղօթք ։

Տր իմ Յս Քս , որ յա-
րուցեալ 'ի մեռելոց 'ի նն-
ջեալ գերեզմանէն կոխելով
զզօրութիւն մահու ապստամբ
ելեր , շնորհեա ինձ , զի և
ես եղանելով ապստամբ 'ի մե-
ղաց իմոց նորոգեցայց նո-
րոգութբ կենաց , և ընդ-
քեզ յառնելով արժանի եղէց
մտանել 'ի փառս քո ։ Ամէն ։

Քահանայն յորժամ խաղաղութիւն տայ ժողովրդեանն՝ 'նշանակէ զՔնի եր֊եւելն Ածածնի, եւ աշակերտաց իւրոց։

## Աղօթք ։

Տր̅ իմ Յս̅ Քս̅, որ զկնի յարութեան քո բազում անգամ մխիթարեցեր զմայր քո, եւ զաշակերտս քո երեւելովն նո֊ցա, շնորհեա՛ զի եւ ես եթէ ո՛չ յայսմ աշխարհի, սակայն 'ի հանդերձելումն զխաղուս քո դէմ յանդիման տեսանել արժանացայց ։ Ամէն ։

Քահանայն յորժամ ասէ զյետին աղօ-
թսն, նշանակէ զքառասուն օր շրջելն
Քի ընդ աշակերտս իւր :

## Աղօթք :

Տր̅ իմ Յս̅ Քս̅, որ զա-
ւուրս քառասուն մխիթարելա-
բար շրջեցար ընդ Առաքե-
ալս քո, ուսուցանելով նո-
ցա զխորհուրդս հա՛ւատոյ
մերոյ, ուսո՛ և ինձ ուղղել
զամենայն զգործս իմ ըստ
կամաց քոց, զի մի՛ երբէք
խոտորեցայց ՚ի ճանապար-
հաց պատուիրանաց քոց :
Ամէն :

Քահանայն յորժամ տայ զյետին խա-ղաղութիւն նշանակէ զՔի համբար-ձումն յերկինս ։

## Աղօթք ։

Տր իմ Յս Քս, որ յետ քառասուն աւուրց առաջի աշակերտաց քոց փառաւո-րապէս համբարձար յերկինս, շնորհեա ինձ զի վեր սիրով քո զաշխարհս արհամարհելով՝ միշտ յաւիտենական բարե-ացն ցանկայցայց, և ընդ քեզ հրճուելով յարքայութե քում արժանի եղէց ։ Ամէն ։

Քահանայն յորժամ օրհնութիւն տայ ժողովրդեանն, նշանակէ զխաչն Ոգւոյն սրբոյ ՚ի վերայ Առաքելոցն։

## Աղօթք։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ հաճեցար առաքել ՚յերկնից զՈգին քո սուրբ ՚ի վերայ Աշակերտաց քոց, որք ՚ի միասին աղօթէին, սրբեա՛ զմիտս իմ ՚յամենայն աղտեղութենէ, որպէս զի Ոգին սուրբ գտանելով զիս իւր արժանի բնակարան զարդարեսցէ զիս պարգեւօք շնորհաց իւրոց։ Ամէն։

Քահանայն յորժամ ընթեռնու զյետին Աւետարանն, նշանակէ զքարոզութիւն մե͞ հաւատոյն Քի, և զմկրտութիւնն, զոր առնէին Առաքեալքն :

## Աղօթք :

Տէր իմ Յս Քս, որ առա֊ քեցեր զաշակերտսն քո քա֊ րոզել ամենայն ազգաց զմէ͞ մարդեղութիւն քոյ, և մկր֊ տել զնոսա 'ի յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ, շնորհեա՛ ինձ ամբիծ պահել զուղղափառ հաւատս քո, զոր ընկալայ 'ի մկրտութեան իմում, և զամենայն պա֊ տուիրանս քո յօժարապէս կատարել մինչև 'ի մահ, ո͞պ զի արժանի եղէց 'ի հան֊ դերձելումն զքեզ ընդ Հօր,

և

և ընդ Ոգւոյդ սրբոյ օրհ-
նել ։ Ամէն ։

Օղջումն ։

Տ̅ր իմ Ա՛Ծ Յ̅ս Ք̅ս զղջա-
նամ և փոշիմանիմ ես բո-
լորով սրտիւ իմով՝ յամենայն
մեղաց իմոց , զի՜ զի դառ-
նացուցի զամենասուրբ բա-
րութիւնդ ։ և յառաջադրեմ
այլ ո՛չ ևս մեղանչել միջնոր-
դութեամբ քոյին ամենազօր
օգնութեանդ ։ Ամէն ։

Վ Ե Ր Ջ ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна



[illegible] 1742 : [illegible] 29

[illegible] · [illegible] · [illegible]

[illegible] · [illegible] · [illegible] · [illegible]

[illegible] · [illegible] · [illegible] [illegible]

[illegible] · [illegible] · [illegible] [illegible]

· · · · [illegible] · · · ·

թուին 1762: ի 29 ին

Հաստատ Մկրտիչն Կերպն

մեհրե . օյ . ոչ հասարակ . ամէ

ամ որք խոնարհ ապրէն ամէն

